Հավելված N 3
ՀՀ կրթության տեսչական մարմնի ղեկավարի
2019թ. հուլիսի 4-ի N 145-Ա հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՌԻՍԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ, ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ, ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

Ի.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի (այսուհետ՝ տեսչական մարմին) ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատման վարչությունը (այսուհետ՝ վարչություն) տեսչական մարմնի կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Վարչության կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում տեսչական մարմնի ղեկավարը:

3. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության նախագահի հրամանագրերով, Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով, տեսչական մարմնի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ, տեսչական մարմնի կառավարման խորհրդի (այսուհետ՝ խորհուրդ) որոշումներով, տեսչական մարմնի ղեկավարի հրամաններով, կարգադրագրերով, հանձնարարագրերով, ցուցումներով, տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի՝ իր համակարգման լիազորությունների շրջանակներում տրված կամ տեսչական մարմնի ղեկավարի կողմից տրված և տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի կողմից փոխանցված հանձնարարականներով և առաջադրանքներով, ինչպես նաև այլ իրավական ակտերով:

4. Վարչության անվանումն է՝ Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատման վարչություն:

5. Խորհրդի հավանությանն արժանացած վարչության ներքին կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում և փոփոխում է տեսչական մարմնի ղեկավարը:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

6. Վարչության նպատակն է նախադպրոցական կրթության, հանրակրթության, նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում օրենսդրության պահանջների պահպանման ապահովմանը, կրթության որակի բարձրացմանը և կրթական ծրագրերի յուրացման ապահովմանը աջակցելու նպատակով ռիսկերի կառավարումը:

7. Վարչության խնդիրներն են՝

1) կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների, կրթության զարգացման պետական ծրագրի իրականացման, պետական կրթական չափորոշիչների, կրթակարգի կիրառման, կրթության իրավունքի, կրթական համակարգի սոցիալական երաշխիքների պահպանման նկատմամբ վերահսկողության արդյունքների, վիճակագրական տվյալների հավաքման և վերլուծությունների միջոցով նախադպրոցական, հանրակրթական, նախնական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների (այսուհետ՝ ուսումնական հաստատություն) կրթական գործունեության ռիսկերի գնահատումը, վերլուծությունը և վերահսկողական գործառույթների նպատակադրումը դեպի առավել ռիսկային ոլորտներ, ուսումնական հաստատություններ.

2) տվյալների բազայի ձևավորումը՝ ուսումնական հաստատություններն ըստ ռիսկայնության դասակարգելու նպատակով:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

8. Վարչության հիմնական գործառույթներն են՝

1) Տեսչական մարմնի կանոնադրությամբ սահմանված ոլորտներում և գործառույթների շրջանակում տեսչական մարմնի կողմից իրականացված պետական վերահսկողության (այսուհետ՝ վերահսկողություն) արդյունքների, վիճակագրական տվյալների հավաքման և վերլուծությունների միջոցով վերահսկողության ոլորտների և ուսումնական հաստատությունների կրթական գործունեության ռիսկերի գնահատման աշխատանքների իրականացում.

2) վերահսկողական գործառույթների նպատակադրում դեպի առավել ռիսկային ոլորտներ և ուսումնական հաստատություններ.

3) վերահսկողության ոլորտներում ռիսկերի կառավարման մեթոդաբանությունների և ծրագրերի մշակում, լրամշակում.

4) վերահսկողության ոլորտներում ռիսկերի կառավարում և ռիսկայնության վերանայում.

5) վերահսկողության և վիճակագրական տվյալների հավաքման արդյունքների հիման վրա ռիսկայնության տեղեկատվական բազայի ստեղծման և վարման աշխատանքներ.

6) վարչությունում առկա տեղեկատվության փոխանակում տեսչական մարմնի ստորաբաժանումների, շահագրգիռ պետական մարմինների միջև.

7) ռիսկերի գնահատման արդյունքների վերլուծության հիման վրա տեսչական մարմնի կողմից ստուգումների իրականացման տարեկան ծրագրի կազմում և սահմանված կարգով հաստատման ներկայացում.

8) տեսչական մարմնի ղեկավարի հանձնարարությամբ վերահսկողության ոլորտներում ռիսկերի գնահատման նպատակով ստուգումների և ուսումնասիրությունների իրականացում.

9) տեսչական մարմնի ղեկավարի հանձնարարությամբ վարչության առջև դրված գործառույթներից և խնդիրներից բխող իրավական ակտերի նախագծերի, առաջարկների, այլ փաստաթղթերի նախապատրաստում, ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցների մշակում.

10) վերհսկողական գործառույթների արդյունքում բացահայտված խնդիրների հետևանքների վերացման նպատակով տրված հանձնարարականների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացում (հետադարձ կապ).

11) իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից ներկայացված դիմումներում բարձրացված հարցերի ուսումնասիրությունների և վերլուծության հիման վրա համապատասխան առաջարկությունների ներկայացում.

12) քաղաքացիների ընդունելություն.

13) վարչության լիազորությունների շրջանակներում հաշվետվությունների, առաջարկությունների, տեղեկանքների և միջնորդագրերի նախապատրաստում.

14) տեսչական մարմնի ղեկավարի հանձնարարությամբ, կանոնադրական խնդիրներից բխող, այլ գործառույթների իրականացում:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

9. Վարչությունը ղեկավարում է վարչության պետը:

10. Վարչության պետը՝

1) իրականացնում է իր պաշտոնի անձնագրով իրեն վերապահված լիազորությունները.

2) կատարում է տեսչական մարմնի ղեկավարի կողմից իր լիազորությունների սահմաններում տրված հանձնարարականները.

3) հաշվետու է տեսչական մարմնի ղեկավարին.

4) կազմակերպում և ղեկավարում է վարչության ընթացիկ գործունեությունը, պատասխանատու է վարչության առջև դրված խնդիրների և գործառույթների իրականացման համար.

5) կատարում է վարչության աշխատողների պարտականությունների բաշխում՝ համաձայն քաղաքացիական ծառայողների պաշտոնների անձնագրերի.

6) օրենքով, այլ իրավական ակտերով, վարչության կանոնադրությամբ նախատեսված գործունեության բնագավառների, նպատակների և խնդիրների վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում տեսչական մարմնի ղեկավարին.

7) տեսչական մարմնի ղեկավարին առաջարկություններ է ներկայացնում վարչության քաղաքացիական ծառայողների՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերապատրաստման, խրախուսման և կարգապահական տույժի ենթարկելու վերաբերյալ.

8) Տեսչական մարմնի ղեկավարին, համապատասխան տեղակալին, ըստ անհրաժեշտության, առաջարկում է վարչության աշխատանքներին մասնագետներ, փորձագետներ, գիտական հաստատությունների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ ներգրավելու, ինչպես նաև աշխատանքային խմբեր ձևավորելու համար.

9) ելնելով վարչության գործառույթներից և խնդիրներից՝ Տեսչական մարմնի ղեկավարի համաձայնությամբ և Տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի գիտությամբ կարող է հրավիրել խորհրդակցություններ՝ դրանց մասնակից դարձնելով այլ մարմինների պաշտոնատար անձանց, մասնագետների, փորձագետների.

10) իրականացնում է վերահսկողություն վարչությանը հանձնված գույքի պահպանության նկատմամբ.

11) խորհրդի հաստատմանը ներկայացնելու համար տեսչական մարմնի ղեկավարին է ներկայացնում վարչության գործունեության տարեկան աշխատանքային ծրագիրը:

11. Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է վարչության պետի տեղակալը կամ գլխավոր մասնագետներից մեկը:

12. Վարչության կողմից պատրաստված ներքին գրությունները ստորագրվում են վարչության պետի, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ նրան փոխարինողի կողմից:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԸ

13. Վարչության աշխատողներն ապահովում են տեսչական մարմնի ղեկավարի, ղեկավարի համապատասխան տեղակալի, վարչության պետի՝ օրենսդրությամբ սահմանված կարգով տրված հանձնարարականների կատարումը և պատասխանատվություն են կրում դրանք չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու կամ լիազորությունները վերազանցելու համար:

14. Վարչության աշխատողները կարող են ընդգրկվել Հայաստանի Հանրապետության կառավարության, Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի հրամանով ստեղծվող միջգերատեսչական հանձնաժողովներում և այլ աշխատանքային խմբերում:

15. Վարչության աշխատողները տեսչական մարմնի ղեկավարի լիազորագրերով կարող են հանդես գալ Հայաստանի Հանրապետության կամ տեսչական մարմնի անունից:

16. Վարչության պետի, տեղակալի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների,

քաղաքացիական ծառայության պաշտոնի հետ կապված դրույթները սահմանվում են նրանց կողմից զբաղեցվող քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով: